



ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԻԵ

Երբ այս համբավվոր Երզնկացի վարդապետին մասին հանգամանորեն կխոսեի իմ «Երիզա և Եկեղյաց գավառ» գործիս Ա. հատորին մեջ (Վենետիկ, Ս. Ղազար, 1953, էջ 225—226), ինձի ծանոթ չէին այստեղ հրատարակած տաղերս այդ վարդապետին գրչեն, և ոչ ալ այդ տաղերուն մեջ գտնված կենսագրական ծանոթությունը:

Վերոհիշյալ գործիս մեջ կգրեի, որ անծանոթ կմնային Կիրակոս վարդապետ Երզնկացիի ծնողներուն անունները: Սակայն շնորհիվ այստեղ հրատարակված երրորդ տաղին վերջավորությամբ, այդ այլևս անծանոթ չի մնար: Կիրակոս Երզնկացի կգրեի.

«Ննջեցելոց իմոց ծնողաց որ զիս ծնան,
ՅՈՂԱՆՆԻՍԻ և ՀԻՊԱՅԻՆ՝ որ առ քեզ կան»:

Ասկե գտա, այս տաղին տնկապերը մեզի կուտան «ԶԿիրակոս պիտակ սպասաւոր քանի և զծնաւորսն իմ Յոհաննէս», այսպես կրկնելով այս տողին մեջ երկիցս, որ իր հոր անունը Հովհաննէս է:

Կիրակոս վարդապետ Երզնկացիի հոր անունը՝ Հովհաննէս, սովորական անուն է հայոց մեջ գործածված, մանավանդ աղոր շատ հաճախ կհանդիպինք Երզնկայի և Եկեղյաց գավառի անցյալին մեջ: Սակայն մոր անունը՝ Հիպա, անսովոր անուն մըն է: Մեծ վաստակավորը՝ Հ. Աճառյան, իր «Անձնանունների բառարան»-ի չորրորդ հատորին մեջ (էջ 88) կգրե. «ՀԻՊԱՅ, իգ. ըստ իս պետք է կարդալ Հիբա և ծագումը դնել արար. ՀԻԲԱ և ՎԵՐ, պարզե, ինչպես ունենք Հաղիա, Պարզե, Ընծայ անունները, բոլորն էլ նույն նշանակությամբ: Մի անգամ գտնում եմ հիշատակված՝ «—Հիպայ, դուստր Ներսեսի և քույր Բասիլ գրչի, որ Կիլիկիայի Խորին անապատում օրինակեց մի մեծ ճաղընտիր, 1270 թվին», և այլն:

Ուրեմն, այսպիսով գտած կըլլանք Կիրակոս վարդապետ Երզնկացիի ծնողներու անունները: Սակայն իր ծնողյան մասին ուրիշ մանրամասնություններ կպակսին դեռ, ինչպես ծննդավայր, ծնողյան տարեթիվ, մանկության և կրթության մասին ծանոթություններ, և մենք իրեն հանկարծ կհանդիպինք իրր վարդապետ և սուրբ բարունապետ:

Երկրորդ տաղին, որ տասը կույսերուն նվիրված է, տնկապերը կուտան. «...Կիրակոս վարդապետի է ասացեալ ի խնդրոյ Մկրտչի ուսումնասիրի...»: Այս Մկրտչի ուսումնասերը Կիրակոս վարդապետ Երզնկացիի ձեռնասունը եղած կերեի: Երուսաղեմի թիվ 395 գրչագիրը «գրեալ է ի խնդրոյ Կիրակոս վարդապետի ձեռամբ Մկրտչի դպրի»: Նույն այս Մկրտչին է, որ Կիրակոսեն կոչված է «աշակերտն իմ, սպասաւորն իմ», երբ Կիրակոս վարդապետ Երզնկացի գրած է Ավետարանը (Նոր Զուղայի, թիվ 47, 92Թ (1330) թվականին), հին Զուղայի Ս. Աստվածածնի հովանիին տակ: (Գրչագրի մանրանկարչության մասին նկարագրող ուսումնասիրություն հրատարակած եմ «Հասկ» հայագիտական տարեգրքի երկրորդ թիվին մեջ):

Իսկ այժմ ալ իր մեկ տաղը «Տասն կուսանաց» մասին, նվիրված կգտնենք իր նույն աշակերտին՝ Մկրտչի: Այսպիսով, տարակույս չի մնար, որ Կիրակոս ունեցած է Մկրտչի անունով աշակերտ մը:

Նոր Զուղայի թիվ 47 Ավետարանը գրված է Կիրակոս Երզնկացիի, հին Զուղայի մեջ, ուր կըսե, թե Կիրակոս եծդեմ, այսինքն

պաճեցուցաւ էր: Իմ վերոհիշյալ գործիս առաջին հատորին մեջ (էջ 230) կհարցնեի. «Ինչու և ո՞րքան ատեն նժդեհեց Կիրակոս. հայտնի չէ»:

Արդ, վկայութիւն ունինք, որ 92է (1328—1329) թվականին Կիրակոս կգտնվեր Երզնկայի Երկայնի վանքը: Հետո, անանուն ժամանակագիր մը կավելցնէ. «Ի թվին 92Ը (1329) Եղնկիս տանուտէրքն ի վեր խանն գնացին և զխարաճն ու այլ շատ շարեր բարձին Պուսայիդ խանին բանիւ, և ոչ գնաց յառաջ ի շար պարոնացն ձեռաց»: Հավանական է, որ իբր համբավյալ կրօնական, Կիրակոս Երզնկացի ըլլար այն պատմիրակութեան մեջ, որ Երզնկայի տանուտերները Աբուսաիդ խանին ղրկեցին՝ իրենց վրա ճնշող տուրքերու մեղմացման կամ բարձման համար: Այս բանը թեև ձեռք բերվեցավ, սակայն չգործադրվեցավ Երզնկայի թուրք իշխանավորնե-

րուն կողմէ: Ասոր վրա, ըստ անանուն ժամանակագրին, «Ի թվին 92Թ (1330) եպիսկոպոս Տէր Սարգիս ի վեր ի Պուսայիտ խանն գնաց: Ի թվին 92 (1331) դարձաւ եպիսկոպոսն պատուով»: Ես կխորհիմ, որ այս գործին առթիվ էր, որ Կիրակոս Երզնկացի գնաց Պարսկաստան: Հոն նյութական պատճառն կամ այլ ստիպմամբ գրեց Նոր Զուղայի թիվ 47 ձեռագիրը, 1330 թվականին: Առ այժմ չեմ կրնար ըսել, թե ե՞րբ վերադարձավ Երզնկա, սակայն 1334 թվին զինքը դարձյալ Երզնկա կգտնենք, ուր մեկենաս-ստացող է գրչութեան:

Այստեղ կուտամ Կիրակոս Երզնկացիի 4 արձակ և տաղածէ գրութիւնները, առնելով գրչագիրներու սեփական հավաքածոյիս մեկ գրչագրէն.

Ա

(Կարմաւ) ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԲԱՆ ՊԵՏԱՆԻ

Զհրաբերան: Երիւարն կենդանի: Ահա կառք հրեղէն և երիւարք հրեղէնք: Մանովի որ ի պատարագելն բոցով վերացաւ յերկինս: Արս իբրեւ զհօր և առ Դանիէլիւ: Եւ Եղեկիէլ ի վերայ կառացն տեսանէր ի նմանութիւն մարդոյ միջոյն ի վեր նմանութիւն արեգական. և միջոյն ի վայր նմանութիւն հրոյ: Եւ ի յարութեան Տեառն հրեշտակ նստէր ի վերայ վիմին, և էր տեսիլ նորայ իբրեւ զփայլակն: Եւ երիտասարդ մի զգեցեալ պատմութեան սպիտակ: Եւ ահա արք երկու հասին առ նոսա ի հանդերձս լուսեղէնս: Եսայիաս մի սրորէիցն առեալ ունեւեար ի կայծականց: Եւ Եղեկիէլն քէրորէքն արկանէին զհօրն ի ձեռն առն որ զգեցեալ էր զպճղնաւորն: Եւ Դանիէլ գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի: Զի յամենայն անցանէ և այսու պատկեր է Աստուծոյ. զի և աստուածապէս նախախնամականաւ զարութեամբ: Երկրորդ՝ զի ինքնակայ ամենեցուն. զի ամենայն էութիւն խառնեալ. և պինդ ունի յէութեան ի կենդանութեան. եթէ բաժանի, կենդանին մեռանի և էութիւն լուծանի:

Զամենեսեան ներգործէ՝ զոսկի, զարծաթ, զպղինձ ձուլէ, բոլորակ, եռանկիւնի, քառանկիւնի: Մաքրողական է, զի զոսկի և զարծաթ պարզէ և մաքրէ, և ինքն ոչ այլայլի: Հաղորդեցուցանէ և զամենեսեան, որք զինչ արինակաւ հպին ի նա, թէ՛ իբր հրահալելի, թէ՛ իբր կենդանի, թէ՛ իբր տունկ նորոգէ զամենայն և կենդանալ նայ. խառուկէ ջերմութեամբն. զի բուսոց և տնկոց և կենդանեաց պատճառ է: Զի անըմբռնելի է. զի առ կամ այլ նիւթ չկարէ ըմբռնել զջերմութիւն արեգականն: Այլ յամենեսեան խառնի և ժողովի դարձեալ: Զի վերաբերծ է, այսինքն վերընթաց:

Այլոց պարունական, զամենայն նիւթ պարունակէ և ինքն ոչ պարունակի, զփայտ, զքար, զխոտ, և զայլ ամենայն նիւթ:

Զանխաբար աճողական իւր յանտառ անկեալ ծածուկ աճէ և լինի բոց մեծ և յայտնէ զիւր մեծութիւն:

Յամենեսեան մերծ է աներևութապէս, ի ջուր, յաւ, ի քար, ի փայտ և յամենայն է, և մեզ ոչ երևի անփոյթ արարեալ և իբրեւ գոշ գոլ թուի: Իսկ յորժամ ի խնդիր ելանեմք, երկաթով զքար հարկանեմք. իբրեւ զընտանի և զազգակից երևի և դարձեալ ծածկի:

Բաժանողական է, զի զնմանասեռսն ի միմեանց բաժանէ զոսկի և զարծաթ, զպղինձ և զանագ և զայլասեռս զժանկ ի պղնձոյ, և յայլոց հրահալելեաց: Զի այրեցաւ և ծախաւ է նիւթոց:

Բ

(Կարմրաւ) ՆՈՐԻՆ ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՒ Ի ՏԱՄՆ ԿՈՒՍԱՆՄՆ
ՈՏԱՆԱԻՈՐ ՏԱՂԻԻ ԶԱՓԵԱԼ

Նախաճառել զայս է արժան, զառակաւոր բան տիրական,
Որ թուով տասն կուսան, դէմս զնէ բոլոր բնութեան:
Իիւսէ ըզճառս հրաշազան, պատմէ զահեղն իւր դատաստան:
Արդարոց կոչէ կուսան, և յիմարաց միանգամայն:
Սոցա պատճառն ոչ է խոտան, ոչ վայրապար և բնդունայն:
Տես զի մեծ և պատուական է աստիճանն կուսութեան:
Ոչ ի յարկէ յայս կոչեցան, ոչ կանոնաւ ինչ փակեցան:
Գործս վերայ է մեր բնութեան, կարգս պայծառ երկնաման:
Իիւթեղէն է այս խորան, տկար և անզար տարտամական:
Ոչ են կարաւղ ամենեքեան բառնալ զլուծն կուսութեան:
Յայտնէ ստեղծիչն մեր բնութեան, յաւետաբերն Աւետարան:
Ասէ կարողքն որ կամեցան, կատարեսցին զայս պատուիրան:
Պաւղոս գոչէ զարմանազան, վասն կուսից շունիմ հրաման:
Իսկ մարդիկ որ ըստացան, մեծ համարին զայս աստիճան:
Կուսութեանքս պատուիրան ի յարէնսն ոչ պահանջեցան:
Այլ և ի նորս որք կամեցան, գնացին զընթացս կուսութեան:
Րոպէից և ոչ լրման, մասնաւորաց և ոչ բնութեան:
Նի այս մեծ գործ կուսութեան, պատիւ և փառք բաղմաց թուեցան:
Արդ որ ի յայն կարգ բարձրացան, և յայլ արէնսն հեղզացան:
Նոցա ասէ զայս պատուիրան, որ կուսութեամբ հպարտացան:
Պարծին ի վարս ճգնութեան, զայն համարին գործ ուղղութեան:
Իսկ ի դեղույն ողորմութեան, թափուր գտան և խոտեցան:
Տանջին ընդ գողս մարդասպան, յառազաստէն արտաքսեցան:
Անողորմից նմանեցան, իբր զպոռնիկ հրով տանջեցան:
Նոքա յիմար անուանեցան, յոյժ եղկելի, թշուառական:
Մեծամեծաւքն ոչ պարտեցան, կրեցին յանձինս իւրեանց զղջան:
Եւ ի փորձունսն յոռացան, մատնիչք եղեն իրր անպիտան:
Հաւղեալ ըզգանձըս անցնական, յանանց գանձուցըն զրկեցան:
Ոչ կուսութեամբն կոչեցան, նոցայ յանուն իմաստութեան:
Իիւթաւոր մարմնով ցուցան, կոյսք և մաքուր ամենեան:
Յուցաւ նախնի մայրն կուսան, կերեալ զպատուըն գիտութեան:
Եւ մերկացաւ զպատմութեան, կորոյս ըզդրախտն փափկութեան:
Լեշկ և մաշկեակ լուսոյն փոխան, զգեցաւ մարմինըս տըխրութեան:
Ո՞ր թէ հրեշտակաց ես դու նման, անբիծ և սուրբ, անմեղ կուսան:
Յիշեա զի սուրբ հրեշտակք անկան, ի յամենայն ախտից մնան:
Սուրբ ես ախտից պոռնկութեան, այսպէս սրբեա զբիծս ամենայն:
Կուսանքն տասն յորջորջեցան, որք կուսութեան վարս ըստացան:
Ի մարմնի անմարմնացան, գեր ի վերոյ բնութեանս գտան:
Բարունույ ձայնի լուան, զայն որ պատմէ Աւետարան:
Ասէ երեք ազգն մարդկան, որ ներքինիք անուանեցան:
Կէսքն յակամայ ի յայն ցուցան, յորովայնէ աչնպէս ծնան:
Ոմն ի պատճառս բռնութեան, ի մարդկանէ ներքինացան:
Սոքա կամաւ յաւատարմեան, սիրով հոգւոյն բորբոքեցան:
Վասն յուսոյ արքայութեան, ըզկուսութեան ձեն ըզգեցան:
Ապա երկուս բաժանեցան, հինգ իմաստուն անուանեցան:
Բարունարար ջահանման, կոյս և մաքուր պատրաստեցան:
Դարձեալ և զնդն ողորմութեան, բարձին ընդ ջահս կուսութեան:
Առատ և զով ջահազգեցան, և փեսային զալոյն անսան:

1 Բնագիրը ունի «Կիրակոսի վարձապետի» անտարակույս պետք է սրբագրել «Կիրակոսի վարձապետի»:

Պնդեալ գաւտովն արիութեան, զմէջս ճասինրն (այսպէս) ցանկական:
 Երկու թևաւք արծաթանման, իբր աղանի վերապրեցան:
 Տեսականան են գործնական, որ է տեսեանն ասպընջական:
 Իսկ գիտութիւն դուռն է բնական, սիրոյն ծընաւդ որդոց մարդկան:
 Է սէրն Աստուած պատմէ Յոհան, ստացաւդքն զնա երանեցան:
 Այլ ի երկուս բաժանեցան, միին լԱստուած, միւսն է մարդկան:
 Սովաւ կուսանքն ճոխացան, ոյք իմաստուն վկայեցան:
 Արդ կուսութեամբ համանման երկու կողմանքն հանդիսացան:
 Յանկականին յաղթող գտան, վարս ընկալան հրեշտակական:
 Եւ ի սիրոյ մեծ պատուիրան յիմար կուսանքն կաղացան:
 Առին ըզհահրն կուսութեան, ունայն յիւղոյն ողորմութեան:
 Լուսոյ նիւթ ոչ ըստացան, յայլոց ընու զայն յուսացան:
 Իբրև յամեաց անմահ փեսայն, անդ ննջեցին ամենեքեան:
 Խորհուրդ խորին մեզ յայտնեցան, ի յամելոյ և քնոյս անուան:
 Նա մեզ բանիւս այս տայ նշան, ոչ առժամայն գոլ յարութեան:
 Դարձեալ ննջումն ասէ մահուան, վասըն յուսոյ մեծ յարութեան:
 Բնական եղև հրաման, մէջ գիշերի բարբառ լուան:
 Որք ննջեցիք ի քուն մահուան, առիք փութով, զի գայ փեսայն:
 Յահեղ ձայնէն այն սարսեցան, յարեան կուսանքն և կանգնեցան:
 Մէջ գիշերին պատրաստեցան, զջահսն լուցին ամենեքեան:
 Կոյսքն իմաստունքն զըւարճացան, ճրագունքն վառ և ոչ շիջան:
 Բախճանապէս զարդարեցան, և փեսային հանդէպ ելան:
 Տեսանեն զոր տենչացան, լսեն զձայնն երանական:
 Զունի անուն ոք չարութեան, և ոչ յիմար կոչի կուսան:
 Իսկ յիմարաց դասք տրտմեցան, զլապտերսն առին յեղոյն ունայն:
 Ողորմագին ձայնիւ ողբան, դէմ իմաստնոցն կողկողան:
 Իիւթ լուսոյս պակասեցան, լապտերքն մեր ահա շիջան:
 Սոքա կոչին յիմար կուսան, քան ըզբնափն ազգըս մարդկան:
 Որք աստ ընչիւք փարթամացան, և անդ գնացին մերկ և ունայն:
 Իիւծեալ ախտին անգթութեան, յառատ եղոյն անդ զրկեցան:
 Մաղթեն յայլոց ցեղն և բաղձան, ի լընկերացն յորոց ոչ տան:
 Նա և յայն ժամ ժամն անագան, որ ոչ գտան զոք աւգնական:
 Այլ և ոչ կուսանքն յոյժ գթական, և ոչ նոցա կարիքն և ջան:
 Սոցա եղև դեղ և պաշտպան, կամ ի խնդրոյն ինչ շահեցան:
 Իսկ իմաստունքն իբրև լուան, պատասխանեն նոցա զայս բան:
 Բոպէ և կոյս այս որ աստ կան, մեզ և ձեզ չէ բաւական:
 Իսկ թէ խնդրէք վաճառական, ըզհոգեւոր և լղըն մարդկան:
 Վառեալ նոքաւք զջահ կուսութեան, առատ և կողմըն գթութեան:
 Առ դրունքս ձեր միշտ կողկողան, զեղն ստիպեն գընել մինչ կան:
 Սոքա ծիծռունք են բնական, մեզ հոգեւոր գուշակ գարնան:
 Նոքա զայս իբրև լուան, գնացին գընել յոյժ անագան:
 Տէրն տէրանց անմահ փեսայն, գայ մտանէ ի հարսնարան:
 Անձուկ սիրով րախճանական, մըտնեն կուսանքն ի մասնական:
 Սուրբ փեսային սիրով լցան, պարեն յանկէտըն յափտեան:
 Նոքա յիմարքն յետոյ գան, յորժամ դըրունքն փակեցան:
 Կոծելով լան և ողբան. Բա՛ց, տէ՛ր, ըզդուռն ողորմութեան:
 Որոց ոչ բանայ փեսայն, ձայն արձակէ հրաժարական:
 Իիւծեալ մեղաւք էք անպիտան, յինէն երթայք տարագրական:
 Սպառնականն ըզձայն լուան. Երթայք յինէն, չէք ինձ արժան:
 Այլ ահագին բանս որ լուան, չիք այլ գեհնան շար քան զայս ձայն:
 Նաև շար տանջարան, և գեհնին գեհնական:
 Արդ գործողացն շարութեան, դարձեալ զայս բանս ասաց փեսայն:
 Յանկացաւդքդ պղծութեան, գործաւդք ըզգործ պոռնկութեան:
 Նզովեալք յինէն արժան, երթայք ի հուր գեհնական:
 Տիշեցէք, եղբարք, զայս բան, տեսէք զահեղն. ըզդատաստան:
 Ի յաշխարհիս որ հեշտացան, գնացին ըզհետ պիղծ ցանկութեան:

Մասամբն այնու որով մեղան, նովին դատին և պատճեցան:
Աչաւքն, որով յայրատ տեսան, զլալն անդադար առնուն փոխան:
Րենական ձայնին չլուան, վասն այն լսեն ձայն եղկական:
Առին ըզհոտ անուշութեան, փոխան առնուն ըզհոտ մահուան:
Յաւը և վաստակ ներքե շրթան, այն կերակուր լինի որդան:
Նովա դարձեալ միշտ զեխեցան, յանմահ հաշէն սովեալ գրտան:
Ջբաթակն կրաւդական, անյագ՝ ձրգեն ըստ եթիւ այն:
Իծեալ մաշին ի պապակման, կաթիլ ջրոյն կարաւտանան:
Այլ և յաղբատս ոչ գրթացան, ոչ քթաղցելոյն արկին սեղան:
Նըթթին սովին միշտ անվախճան, ծարաւ լեզուին անզովական:
Ողբ և եղուկ նոքա կարդան, և ատամունքն ի կափկափման:
Ղաւղին ի գուր զըծոխական, անել, անլոյս և հրահոսան:
Որոց ձեռքն արեամբ ներկան, և ի յաղաւթսն ոչ ամբառնան:
Րոպէիւքն այն կապեցան, շղթայք ձեռացն անլուծական:
Միւս մասամբն կրողական, յեկեղեցիս ոչ ընթացան:
Էղան սակս այն ի շար կապան, առին ըզլացն կափկափման:
Ի տապ, ի սառն և մերկ անդ կան, խաւար զիշեր միշտ յափտեան:
Նըսեմ և նեղ գուր տըղմական, շար վիշապին համասեղան:
Նուաղելոց ի թալկացման, ոչ արբուցին ջուր զովացման:
Ոչ մերկացն որ սարսըռան, զգեստ ազուցին կամ պատմունճան:
Քայքայելոցն յաւտարութեան, նոցա շեղեն տուն ժողովման:
Այլ հիւանդացն ի տես ոչ գան, որ ի մահիճք ցաւոց անկան:
Յանկողինան ոչ մերձացան, գութ ոչ ցուցին բանիւ հարցման:
Են սպեղանաւք բժշկական ապաքինել ոչ փութացան:
Ի կապեալքն որ ի բանդ կան, մխիթարել ոչ մերձեցան:
Մատնին մահուն անմահական, և կերակուր լինին որդան:
Անէծս առնուն սարսափական, ի բերանոյն արարական:
Սուրբքն ամպաւք վերասլանան, և հանդիպին որում բաղճան:
Տեսանեն զանմահ փեսայն, յագին գեղովն որում բաղճան:
Ունկամք լըսեն զձայնն էական, քաղցր բարբառ երանական:
Իրանեալ պըսակ անճառական, եղեալ ի զլուս պըսակեցան:
Նոյն պէս և հոտ անմահութեան, նոցա բուրէ կենաց ի կեան:
Քրիստոսի համասեղան, բազմիւ ընդ Հաւր յարքայութեան:
Նոցա լինի Տէրն ի պաշտպան, բանայ ըզխորս անճառական:
Ուսուցան զոր ոչ լուան, և տեսանեն զոր ոչ տեսան:
Ղամպարափայլ պայծառանան, ծագին նման արեգական:
Ուր արդարոց կաճառքն կան, նահապետացն համախորան,
Բարունեացն աստուածաբան, կցորդ լինին իմաստութեան:
Մարգարէիցն տեսութեան, հաւասարեն ի գիտութեան:
Առաքելոցն դասակցեն, հայրապետացն համասեղան:
Մագեն փառաւր անճառական, աւրհնեն զԱստուած միշտ, յափտեան²:

Գ

(Այս տաղը անխորագիր է)

Ջարթիք ասէ Տէրն ի քընոյ մեղաց մահուան,
զի ոչ գիտէք զօրն իմ գալոյ և ոչ ըզժամ:
Կամիս դու իմանալ զահեղ ըզձայն,
զի արդ ստիպէ արթուն լինել Աստուածըն բան:
Ի կարի աւգտակարացն է այս սահման,
անգիտանալ որդոց մարդկան զօրն մահուան:

² Տաղիս իւրաքանչիւր տողի սկզբնատառը առնելով, կունենանք «Նուաստ ոգոյ ապիկար եւ անպիտան մեղուցելոյս Կիրակոս վարդապետի է ասացեալ ի խնդրոյ Մկրտչի ուսումնասիրի փառն տասն կուսաբանք յիմարացն զի անողորմ էին նոքայ եւ իմաստունէն ողորմաց»:

Բաբունաբար առակըս այս տէրունական,
 յընչիցն առնել ողորմութիւն տալ մեզ հրաման:
 Այլ միւս բանս այս որ ըզկնի շարագրեցան,
 է առ նոսա որ զամենայնըն զըլացան:
 Կարօտելոցն ոչ մատուցին դեղ և դարման,
 և ոչ բանիւ քաջալերեն յորդորական:
 Ոչ եղեն վերակացու և օգնական,
 կամ այլ իւրք աւգուտ լինել աղքատ բնութեան:
 Սայ իբրև զիս առեալ թաքոյց ներքոյ գրրուան,
 և ոչ էարկ ի տրապիզիտ յոգիս մարդկան:
 Պարտ է գիտել զառակս զայս խորհրդական,
 զի կայ ծածկեալ ի սմա իմաստ անճառական:
 Իսկ աստ վասն է՝ որ դէմս ընծայէ արքայական,
 և անդ փեսայ գոլ անուն է ի խրախուփեան:
 Տես և իմա զընտանութիւն յանմահ փեսայն,
 որք կուտութեամբ զինչս և զստացումս մերկացան:
 Այլ աստ Բ և Ն քանքար որ ըստացան,
 և յաւելուած կրկին շահով փարթամացան:
 Կոյր և յիմար ծառայն տարտամ թշուառական,
 առեալ զքանքարն թաքոյց յերկիր յաղբ հեշտութեան:
 Սոցա տէրն և թագաւորն անմահըն բան,
 համար առնէ իւր ծառայիցն և դատաստան:
 Պատրաստ գտան Բ ծառայքն միաբան,
 և գոհանան զբարի տէրն յոյժ մեծաձայն:
 Ահա կրկին շահ քանքարացն որք և տուան,
 դու ես պատճառ այսրմ շահի և բարութեան:
 Սոցա ասէ տէրն. Մառայ բարի ու արժան,
 հաւատարիմ ի սակաւուդ բազում փոխան:
 Ասէ. Մտէք յուրախութիւնսն անզրաւական,
 այս ձայն յայտնէ զերանութիւն անզուգական:
 Իիծեալ ախտին անգիտութեան ծառայն խոստան,
 ամբաստանէ զբարի տէրն խիստ անպիտան:
 Որ ետուր զքանքարս զայս ինձ միմիայն,
 ահա երկիր զայն թաքուցի որ չգողանան:
 Բոպէ մի ետուր ընդ իս քանքար միայն,
 հաւա քոյդ ցքեզ, զինչ է պիտոյ բընաւ մարդկան:
 Բարի տէրն բարկացեալ, ասէ զայս բան.
 Ի բերանոյ քումէ դատիմ զքեզ անհաւան:
 Արդ, գիտէիր զի խիստ էի առ պարտական:
 պարտ էր զարծաթդ իմ արկանել քեզ ի սեղան:
 Նստար դու յաթոռ ընդ վեհ ռաբունական,
 զարծաթ բանին ի լսելիս շարկեր մարդկան:
 Իսկ եթէ զայն պատճառեցես. թէ ոչ անսան,
 պարտ էր խրատել, ուսուցանել զբան փրկութեան:
 Ե՛ի ես եկեալ պահանջէի զոր ինչ լուան,
 և զտոկոսիս յաւելուածով գործ կատարման:
 Զի զդիւրագոյնըն քեզ թողի խաւսել զբան,
 և ինձ առի զգոհարինն գործ պահանջման:
 Մանր թուեցաւ քեզ կատարել զիմ պատուիրան,
 վասն այնորիկ քանքար շնորհացն այլոց տուան:
 Նաև զայս վարդապետք որ զկնի գան,
 զտաղանդն առեալ որ ոք յարգեն յոյժ զաւրանան:
 Աւրըստօրէ առաւելեալ ծովու նման,
 յորովայնէ նորա բըղխեն ջուրք գիտութեան:
 Իիւթեղէն մարմնովս յերկրի որք ծովացան,
 զարծաթ շնորհացըն կորուսին զոր ընկալան:

Ղամբար լուսոյ պայծառ ջահից յոգոց շիջան,
 և իմաստից աղբեր ի մտաց ցամաքեցան:
 Սորա ոչ մինչ ի յայս վայր պատժեցան,
 ալլ անհնարին սաստիկ տանջին որբ հեղգացան:
 Նաև ինձ վա՛յ և եղո՛ւ վ յահեղ արև այն,
 որ ոչ զգլուխքն ունիմ յոգիս շահին փոխան:
 Իսկ յորժամ Տէրն ի յերկնից ի դատաստան,
 զիս գտանէ ամենեկին թափուր 'ւ ունայն:
 Մարիամ կոյս անարատ անապական,
 բարեխօսեա վասն իմ անձինքս փրկութեան:
 Յորժամ զործք թագաւորեն որդւոց մարդկան,
 և համրացին լեզուք արագ ճարտարասան:
 Ուր թագաւորք ոչ երեկն և ոչ իշխան,
 ոչ դատաւորք և մեծատունք անդ բռնանան:
 Հեծելազօրք անդ ոչ լինին ի պաշտաման,
 ալլ միայնակ միայն լինին անազնական:
 Աստուածածին մայր Քրիստոսի և բնակարան,
 ծունըր կրկնեա վասն իմ անձինքս հաշտութեան:
 Ննջեցելոց իմոց ծնողաց որ զիս ծնան,
 Յոհաննիսի և Հիպայի որ առ քեզ կան:
 Նոցա յանցանքն ջնջեսցին յարն անվախճան,
 և որ զամէնն ասէ բանիս մեղ միաբան:
 Էին անմահ, անեղ, անծին և անսկզբան,
 և Միածին Որդւոյն պատիւ Հաւր զուգական,
 Սուրբ Հոգոյն վայել է փառք անսահման,
 միասնական երրորդութեանն միշտ, յաւիտեանն³:

Դ

(Կարմրաւ) ՍՐԲՈՅՆ ԳԵՈՐԳԵԱՅ ՏԱՂ Ի ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԵՐԶՆԿԵՅԻՈՑ

Սէր և սիրոյ ծընունդ և աղբիւր կենաց,
 Բախճան պերճալի վերնոց և նիւթականաց,
 Բարի և բարեաց բաշխաւդ, և լոյս երեսաց,
 Որ ստեղծեր զԱդամ պատկեր մեծի քո փառաց,
 Յանպատում դրախտին եղեր փափկութեան վայրոց,
 Նորազուարճ գեղապաճոյճ լուսատարադ,
 Գերափայլ պճնազարդեալ նման հրեշտակաց,
 Էական լուսով լցեր յեթնյարփիցն հաց:
 Որպէս թագաւոր աւծեր տէր տիեզերաց,
 Բենական հաղորդ ըզնա արարեր կենաց:
 Գործել և պահել զԱդամին բան քո հրամայեաց,
 Եղեր պատուիրան նիւթանձն իշխանականաց:
 Արփիափայլ պղտոյ դրախտին վայելօղ եկաց,
 Յատուկ իմոյ ծառոյն հրաժարել ի բաց:
 Իբրև զփայլակ անկեալն յերկնային զօրաց,
 Կամակոր զաւրօք դիւաց խաւարասիրաց:
 Իսկապէս հայրըն մեղաց և զքտակ չարեաց,
 Բամապէս դասուց խրմբից սեագունդ զօրաց:
 Անդ լրաւ զպատուէր կենաց մարդոյն մախաց,
 Կըցորդ խորհրդոց առեալ զօճն ի գաղանաց,
 Որ խաբեալ էհան զԱդամ ի դրախտէն կենաց:
 Սա յարոյց և զհալածանս մարտիրոսաց,
 Էգիտ գործակից ինքեան ի բռնաւորաց:

³ Տողերուն զլիսատառ սկզբնատառերը կկազմեն՝ «ԶԿիրակոս պիտակ սպասաւոր բանի եւ զծնաւպսն իմ Յոհաննէս»:

Եւ պատերազմեալն սուրբս կրկին ներհալաց,
 Բամեալ զամենայն տեսակս խոշտանգանաց:
 Գործիս զանազան հնարեալ շար թագաւորաց,
 Շաղափս և շամփուրս երկայնս և սուրս սուսերաց,
 Տիգաց նիզակաց թեքեղ ատամնաթափաց,
 Մամուլըս հիւսանց հնարեալ շար մեքենայաց:
 Տապակս երկաթի, սըղոց և սուր բեռնաց,
 Ազգաց և ազանց երկրի հըրովարտակ գրեաց,
 Պարգևս ձըրից բաշխել ըզդիս պաշտողաց,
 Խոշտանգանս տանջանաց Տեառն երկրպագուաց,
 Սպառնալիք և բանտ և մահ զՔրիստոս սիրողաց:
 Յայնժամ լոյս պայծառ ծագեաց յաշխարհն Գամբաց,
 Հալածեաց յոգոց մարդկան ըզխաւար մեղաց:
 Մեծ վկայն Գէորգէոս ընտրեալն ի բազմաց,
 Պայծառ քան զարե ծագեալ ի մէջ աստեղաց:
 Հաստատեաց զեկեղեցի յուսով Տէր ըսխեաց (?),
 Փարատեաց զերկիւղ մահու և քաջալերեաց:
 Անդր ի հանդիսին ձայնէր շար թագաւորաց,
 Զոր Ամովսածինն յառաջ հոգւովն գոչեաց:
 Ես զըտայ ոչ խնդրողաց, ցուցայ տեսեաց,
 Յայտնի յանդիման կացի զիս ոչ հարցողաց:
 Անդ զՄիածինն Հօր Աստուած դաւանեաց,
 Համր և կոյր և խուլ ըզկուռըս հեթանոսաց:
 Թագաւորն բարկացեալ տանջել հրամայեաց,
 Երկաթի քերչաւ զմարմինն քանցեալ մաշեաց:
 Կօշիկս երկաթիս ագոյց, յոտսն բեռնեաց,
 Մայրագոյն սիւն և ստուար սրբոյն վերադրեաց:
 Տէրն մեր իջեալ յերկնից լոյս սաստիկ ծագեաց,
 Ողջացոյց զմարմին սրբոյն ի հրաշ տեսողաց:
 Ընդ նմա լինել յաւէտ բանիւ յորդորեաց,
 Մեծ զնա ի վկայս խոստմամբ առնել հրամայեաց:
 Խոշտանկանս երկոտասան կըրել ի շարաց,
 Զնահատակութեան հանդէս կոյս թըլովն ամաց:
 Եռակի անգամ նմա մեռանել ասաց,
 Եւ ի քառակին կարգել ի դասս հրեշտակաց:
 Եւ զայս ասելով Փրկչին զվկայն հաստատեաց,
 Վերացաւ փառօք յերկինս դասող հրեղինաց:
 Եւ ըստ կանխասաց բանին զընթացսն աւարտեաց,
 Քաջութեամբ մենամարտեալ զհաւատսն պահեաց:
 Եւ երեք բիւր մարդկան Տեառն նըրիրեաց,
 Ընդ Անատօլէ և թագուհոյն հարիւր ընդ բիւրոց:
 Յայնժամ թագաւորն շար վըճիռ հաստատեաց,
 Բանալ զզլուիս սրբոյն անօրէն դահճաց:
 Ընդ արեանն կաթն և ջուր ի մարմնոյն բղխեաց,
 Եւ աղօթելով առ Տէր զհոգին աւանդեաց:
 Վերացաւ փառօք յերկինս ի դասս անդրանկաց,
 Ի կաճառս բիւրաւորս խըմբից երջանկաց:
 Վասն մեր բարեխօսէ առ Տէրն աշխարհաց,

Պարզեւել զխաղաղութիւն սուրբ եկեղեցեաց,
 Զթագաւոր մեր փրկել ի պատերազմաց,
 Զհայրապետն սուրբ պահել յերկեակ որսողաց,
 Բանին պետաց համառօտել ըզբանն կենաց,
 Սուրբ երորդութեանն երգել փառս ընդ հրեշտակաց,
 Այժմ և յաներեկ աւուրն անվախճան կենաց:
 Յաւիտեանս յաւիտենից ընդ լուսեղիւնաց⁴:



Հոս մեր հրատարակածներուն ուրիշ օրինակները ծանոթ չեն ինձի: Իսկ այն օրինակը, որմէ հրատարակեցի, համաճար անխնամ գրչութիւն մըն է, և կամ ոչ ընտիր օրինակ մը եղած է բնագիրը: Նոյն ատեն Կիրակոս վարդապետ Երզնկացի տաղանդավոր գրող մը, կարող պատկերավորմամբ վարպետ գրող մը չերեիր: Մեր այս վերը հրատարակածները ներշնչումն զուրկ կերեին

և գրեթէ շատ բռնազբոսիկ իբր բանաստեղծութիւն: Բանիբուն րաբունապետ մը չեն մատնէր հրատարակված այս շորս ճոռոմաբան գրութիւնները: Սակայն ադոնք կարժե հրատարակել իբր վաստակը գործով գրեթէ անծանոթ մնացած մեր հին համբավյալ վարդապետներէն մեկուն, որպիսին է Կիրակոս վարդապետ Երզնկացին: Գուցէ հայտնվին իր ուրիշ աշխատութիւնները, որոնք զինքը արժանի ընեն իր համբավին:

⁴ Տողերուն սկզբնագրերը, մինչև 26-րդ տողը, կկաղմեն՝ «Սերոյն Գեորգեայ ի Կիրակոսէ երգ»:

